

**ԲՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ**

ԹԱՆԱՆՅԱՆ Գ. Գ.

Լեզուն ոչ միայն խոսք է, հաղորդակցման միջոց, այլև ազգի հոգեբանությունը, մտածողությունը, աշխարհաճանաչողությունը և վերջապես առօրյա կենսափիլիսոփայությունը: Պատահական չէ, որ լեզուն եղել է ամենատարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա՝ սկսած լեզվաբանությունից մինչև փիլիսոփայություն: Լեզվի փիլիսոփայական ուսումնասիրությունը գալիս է դեռևս Արիստոտելից, հասնում մինչև լեզվաբանական պոզիտիվիզմ ու ժամանակակից պոստմոդեռնիզմ: Հին հույների մոտ, օրինակ, լեզվաբանությունը սկիզբ էր առնում իմացաբանական խնդիրների գիտական լուսաբանության թելադրանքով: Զբաղվելով ճանաչողության և իրականության փոխհարաբերությունների խնդիրներով և մշակելով տրամաբանության հիմունքներն ու ճարտասանական արվեստի տեսությունը՝ հույները անխուսափելիորեն կանգնում էին բառերի ու իրերի փոխհարաբերության խնդրի առջև: Դա նրանց զբաղեցրեց մի քանի հարյուրամյակ: Նրանց մի մասի (Հերակլիտ, Պլատոն) համոզմամբ՝ անունները տրվել են առարկաներին ըստ բնության, ըստ առարկայի էության կամ բնույթի, մյուս մասի (Դեմոկրիտ, Արիստոտել) պնդմամբ՝ ըստ օրենքի, ըստ ավանդության, սովորության կամ դրության: Այս երկու հակադիր մոտեցումները հիմք դարձան լեզվի փիլիսոփայության հետագա զարգացման, տեսակետների խորացման ու ճյուղավորման համար: Լեզվաբանության մեջ առաջինը Ֆ. դե Սոսյուրն առաջարկեց լեզուն քննարկել որպես նշանների համակարգ (կառուցվածք), որը պետք է ուսումնասիրվի ինքն իր մեջ (ներքին լեզվաբանություն), իսկ լեզվի և հասարակության փոխհարաբերությունը, նրա հասարակական գործառնությունը, հասարակական պատմությունը վերաբերում են արտաքին լեզվաբանությանը: Սոսյուրը ձևակերպեց լեզվաբանական նշանի արժեքի հասկացությունը՝ դրանում առանձնացնելով երկու կողմ՝ նշանակվող և նշանակիչ: Ըստ Սոսյուրի՝ նշանը պայմանական է և բնական կապ չունի նշանակվողի հետ¹: Լեզուն բնորոշելով որպես գաղափարներ արտահայտող նշանների համակարգ՝ նա լեզվաբանությունը համարում է նշանագիտության (սեմիոտիկայի) մի մասը: Եվ, իսկապես, մի կողմից բառն անմիջական կապ չունի առարկայի հետ, բառն առարկայի անվանումն է և չի առնչվում նրա էության հետ. ոչինչ ընդհանուր չունի առարկայի բնույթի հետ: Եթե առարկայի անվանումը՝ բառը, առնչվեր առարկայի էության հետ, ապա չէին լինի տարբեր լեզուներ: Չէ՞ որ առարկայի բնույթը չի փոխվում ազգա-

¹ Слюсарева Н. А., *Теория Ф. де Соссюра в свете современной лингвистики*, М., 1975, с. 45.

յին պատկանելության փոփոխման հետ: Հասկացությունն է, որ արտացոլում է առարկայի էությունը, դրա էական հատկությունները և ընդհանուր է բոլոր ազգերի համար: Իսկ հասկացության հնչյունային կոդմը՝ բառային թաղանթը, անմիջական առնչություն չունի՝ առարկայի էության հետ. ըստ այդմ էլ այն տարբեր է տարբեր ազգերի մոտ: Մյուս կողմից՝ բառն ավելին է, քան նշանը կամ ավանդությունն ու սովորությունն են: Բառի մեջ առկա է որոշակի իմաստ, որը մարդու կողմից իրականության ճանաչման արդյունք է: Իրական աշխարհի առարկաները, դրանց հատկանիշները, հարաբերությունները և այլն ընդհանրացվում և արտացոլվում են բառի մեջ: Եվ իզուր չէ, որ բառի գիտական բնորոշման մի շարք էական հատկանիշների մեջ՝ ամբողջականություն, ձևի կայունություն, արտասանական միասնականություն, կարևորագույն տեղ է գրավում իմաստի որոշակիությունը: Վերոհիշյալ տեսակետների միջև անհաղթահարելի հակասություն չկա, այլ առկա է միայն մոտեցումների տարբերություն: Առաջին դեպքում մոտեցումը գուտ նշանագիտական (սեմիոտիկական) է, երկրորդ դեպքում՝ իմաստաբանական (սեմանտիկական): Բառի իմաստի բացահայտումն ու վերլուծությունը մշտապես եղել են լեզվաբանության ուշադրության կենտրոնում, ինչը դժվար թե կարելի լինի ասել փիլիսոփայության մասին: Փիլիսոփայությունն առավել հիմնավոր զբաղվել է լեզվի մնացած մակարդակների՝ հնչյութաբանության, շարահյուսության, ոճաբանության, տեքստաբանության և այլնի ուսումնասիրությամբ, իսկ ինչ վերաբերում է լեզվի ձևութաբանային քննության մակարդակին, ապա այն հեռու է բավարար լինելուց: Հակառակ դեպքում նա պետք է որ ուսումնասիրության լուրջ առարկա դարձներ բառերի որոշակի խմբեր, որոնք ունեն փիլիսոփայական խոր իմաստ և հագեցվածություն, բնութագրում են տվյալ լեզվով խոսող ազգի մտածողությունն ու շրջապատող աշխարհի նկատմամբ վերաբերմունքը:

Այժմ փորձենք պարզաբանել առաջադրված կարծիքը: Սկսենք «բան» բառից, որը նշանակում է ն՝ խոսք, և՛ առարկա, և՛ գործ²: Բայց նաև նշանակում է Աստված, բանականություն, ինչպես նաև էություն. ի սկզբանե էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր առ բանն: Հին Կտակարանում Եհովա բառի, այսինքն՝ Աստուած բառի փոխարեն օգտագործվում է Բան բառը: Այստեղ այն նշանակում է խոսք, բառ և դեռ հին հրեական մատյաններից հայտնի էր իբրև աստվածային էություն: Նոր Կտակարանում արդեն բանն ընկալվում է որպես «Երրորդության երկրորդ անձին տիտղոսներէն մին, կը ցուցանէ թերևս թէ Աստուած իր գործելովը և ուսուցանելովը կը յայտնուի, ինչպէս որ մարդուս խորհուրդը կը յայտնուի բանիւ, այսինքն խօսքով» (Յովհ. Ա. 1, Ե. 7. Յայտ. ԺԹ. 13): Քանի որ խոսքը Աստծու մասին է, ապա Աստված կամ Աստուած բառի լավագույն մեկնությունը Հ. Աճառյանը համարում է Խոսքով Անձեվացու մեկնությունը՝ աստ էած, աստ

համարելով

«հաստատումն,

² Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. 1, Ե., 1971, էջ 403:

ստեղծումն», քանզի, ինչպես գրում է Անձնացին, «Աստուած անունն արարչական է... և առ մեզ ստուգաբանի թէ աստ էած զմեզ»: Թէն վատ չէ նաև այն մեկնությունը, ըստ որի՝ «աստուած» բառը կազմված է աս՝ «ասել, խոսք, շունչ» և տուած՝ «տրվող» բառից, այսինքն՝ շունչ տվող³: Այս երկու մեկնությունները ոչ միայն չեն հակասում, այլև կարծես փոխլրացնում են իրար, քանզի Աստված հողից մարդ ստեղծեց ու շունչ, հոգի փչեց նրա մեջ: Ինչպես Աստվածաշնչում է ասվում. «Եւ Աստուած ասաց. Մեր պատկերով և նմանութեան պէս մարդ շինենք ...Եւ Աստուած ստեղծեց մարդը իր պատկերով...» (Ծննդոց, Գլուխ Ա. 26,27): Այնուհետև նա ստեղծեց Եվային և նրանց բնակեցրեց Եդեմի պարտեզում՝ պատվիրելով ու ասելով, թե «Պարտեզի ամեն ծառիցը համարձակ կեր: Բայց բարիի ու չարի գիտութեան ծառիցը մի ուտեր, որովհետև նորանից կերած օրը մահով պիտի մեռնիս» (Ծննդոց, Գլուխ Ա. 46, 47): Բայց մարդը խախտեց այդ պատվիրանը, որի համար վտարվեց դրախտից, զրկվեց անմահությունից. «...նորա համար որ հող էիր դու, և դեպի հողը դառնաս...» և անիծվեց. «Երեսիդ քրտինքովը հաց ուտես, մինչև որ ետ դառնաս դեպի երկիրը, որովհետև նորանից առնուեցար» (Ծննդոց, Գլուխ Գ. 19.): Մարդը զրկվեց միայն Աստծուն հատուկ մի շնորհից՝ անմահությունից, բայց ձեռք բերեց նրա մեկ այլ հատկանիշ՝ արարելու, ստեղծելու կարողությունը: «Արարել» բառը կազմված է կրկնվող բուն հայկական «ար» բառարմատից, որը նշանակել է հուր, փայլ, լույս, ինչպես նաև Աստված⁴: «Ար» արմատն է ընկած արիական բառի հիմքում: Արիական ազգ, արիական ժողովուրդ, որը հաճախ մեկնաբանվում է որպես զտարյուն, առանձնաշնորհ, աստվածային ծագում ունեցող ազգ կամ ժողովուրդ: Այդ բառարմատով են կազմված արև, արփի, արեգակ բառերը: Իսկ հեթանոսական ժամանակներում հուրը, կրակը և հատկապես արևը աստվածացրել են. գրեթե բոլոր ազգերի, ներառյալ՝ հեթանոս հայերի համար դրանք եղել են պաշտամունքի առարկա: Մ. Խորենացին նշում է, որ Վաղարշակ թագավորը, «Արմավիրում մեռյան շինելով, արձաններ է կանգնեցնում արեգակին...»⁵: Գառնիի հեթանոսական տաճարը ևս նվիրված է եղել արևի աստված Միհրին: Արեգակի պաշտամունքի հետ են կապված հայերի մեջ տարածում ստացած այնպիսի դարձվածքներ, ինչպիսիք են՝ արևիդ մեռնեմ, արևդ վկա, արևդ սիրեմ և այլն, որոնց մեծ մասում արևը համապատասխանում է աստված բառին: Արարն արդեն գործողություն է, սակայն աստվածային: Մարդը, կրելով աստվածային արարչագործության հրեղեն բոցի մի փոքր կայծը, չբավարարվեց միայն բնական միջավայրով, այլ դրա հիման վրա ստեղծեց ու ստեղծում է մի այլ՝ արհեստական միջավայր, որը կարծես աստվածային արարչագործության շարունակությունն է՝ հանձին մարդու: Այսինքն՝ աստծու անեծքն անգամ օրհնություն դարձավ մարդու համար:

³ Նույն տեղում, էջ 279:

⁴ Նույն տեղում, էջ 312:

⁵ Խորենացի Մ., Հայոց պատմություն, Ե., 1968, էջ 159:

Աշխատանքը, ըստ էության, ոչ միայն մարդու գոյատևման միջոց է, այլև մարդու մարդացման մի երկարատև գործընթաց: Իր բոլոր նվաճումների ու ձեռքբերումների համար մարդը պարտական է միայն աշխատանքին:

«Մարդ» բառը նշանակում է «մահկանացու»: Հնդեվրոպացիները մարդ էակին անվանում են երկու ձևով. մարդ (մահ, մահկանացու)՝ որպես անմահների հակառակը, և Ադամ (երկրածին, հողեղեն, հող)՝ որպես երկնայինի հակառակը: Հայերենում պահպանվել է առաջին մեկնաբանությունը, իսկ երկրորդը ջնջվել է⁶: Այս երկու մեկնությունները ևս միմյանց չեն հակասում, քանի որ, ինչպես արդեն ասվեց, Աստված հողից շինեց մարդուն, տվեց անմահություն, այնուհետև նրան զրկեց անմահությունից և նորից հող դարձրեց: Վերադառնալով «բան» բառին՝ պետք է ասել, որ հայերենում դրժվար թե գտնվի մեկ այլ բառ, որն ունենա այդքան ընդգրկուն ծավալ ու հարուստ բովանդակություն, աշխարհայացքային ու փիլիսոփայական հագեցվածություն: Այս բառի մեջ կարծես թե բնագդաբար ի սկզբանե արդեն հաղթահարվում է փիլիսոփայության բազմադարյան վեճը՝ մատերիա⁷, թե՞ իդեա, և այն հաղթահարվում է ծավալման կամ գործողության միջոցով: Մարքսիզմն անգամ այն կարծիքին է, որ մատերիա-իդեա հակադրությունը (խոսքն առաջնայնության մասին է) գոյություն ունի միայն փիլիսոփայության հիմնական հարցի շրջանակներում, որից դուրս այն որևէ այլ իմաստ չունի, որն էլ հաղթահարվում է գործնականում⁷: Այսինքն՝ մատերիայի ու իդեայի կապն ավելի խորքային է, քան այժմ մեզ հայտնի է: Ինչպես բան բառի մեջ, այնպես էլ իրականության մեջ նրանք պետք է որ համադրված, սինթեզված լինեն, թեկուզև իրենց նախնական վիճակում՝ պոտենցիալ գոյության իմաստով: Այսօր արդեն կա մի բան՝ ինֆորմացիան, որը, կիբեռնետիկայի հիմնադիր Ն. Վիների կարծիքով, ո՛չ մատերիա է և ո՛չ էլ էներգիա⁸: Սակայն այն նաև իդեա չէ: Իսկ մարքսիզմը ժամանակին սովորեցնում էր, որ աշխարհում ինչ էլ վերցնենք կա՛մ մատերիա է, կա՛մ իդեա, երրորդը չի կարող լինել: Ուրեմն երբ հիմա արդեն կա մի բան, որը ո՛չ մատերիա է և ո՛չ իդեա, ապա ինչո՞ւ չի կարող լինել մի այլ բան, որը և՛ այն է, և՛ այս: Դրանով հանդերձ՝ հարկ է նշել, որ բոլոր բառերից թերևս բան բառն է առավել ցայտուն պատկերացում տալիս հնագույն մարդկանց աշխարհընկալման վերաբերյալ, որոնց համար այս աշխարհն ընդհանուր, մեկ միասնական ամբողջություն էր: Հետագայում միայն, աստիճանաբար, զուտ իմացաբանական նպատակներով այդ միասնական աշխարհը, ի դեմս տարբեր գիտությունների, մասնատվեց ու տարաբաժանվեց, որը և հզոր թափ հաղորդեց գիտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այդ գործընթացներն

⁶ Աճառյան Հր., *նշվ. աշխ., հ. 3, Ե., 1977, էջ 278*:

⁷ Էնգելս Ֆ., *Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական դասական փիլիսոփայության վախճանը, Ե., 1961, էջ 31*:

⁸ Винер Н., *Кибернетика или управление и связь в животном и машине, М., 1958, с. 201*.

այժմ էլ շարունակվում են: Միայն վերլուծելով՝ կարելի է ճանաչել աշխարհը: Սակայն այդ բոլոր գիտությունների վերջնական ու զրլիավոր խնդիրը, այնուամենայնիվ, ի վերջո համադրվելով, աշխարհի ընդհանուր պատկերի ստեղծումն է՝ սկսած ծննդից մինչև մեր օրերը, ինչպես նաև ապագա հնարավոր զարգացումների կանխատեսումները:

Այժմ ստուգաբանենք «տարածություն» և «Ժամանակ» բառերը: «Տարածություն» բառը կազմված է «տարած» արմատից և «ություն» ածանցից: «Տարած» բառը նշանակում է սփռող, ծավալական, ընդարձակվող: Այն ևս կազմված է երկու մասից՝ տար և ած: Տար նշանակում է հեռու, իսկ ած՝ տանել, այսինքն՝ հեռու տանել⁹: Ակնհայտ է, որ «տարած» բառն արտահայտում է գործողություն, կամ որ նույնն է՝ շարժում: Դրան ավելացվում է «ություն» գոյականակերտ ածանցը, որի շնորհիվ կազմվում է գործողության հետեվանք ցույց տվող «տարածություն» գոյականը: Հետևաբար, տարածությունն անխզելիորեն կապված է շարժման հետ, ավելին՝ դրա հետևանքն է:

«Ժամանակ» բառը կազմված է «Ժամ» արմատից և «անակ» ածանցից: Ժամը ժամանակի որոշակի միավոր է: Բայց այն նշանակում է նաև եկեղեցի, այսինքն՝ տեղ: Եկեղեցական գործերում հաճախակի գործածության պատճառով, մասնավորապես եկեղեցական ժամասացությունը, միավորվել է ժամանակի հետ, և այս երկու գաղափարները լեզվի մեջ ընթանում են գուցա հեռաբար¹⁰:

Ժամանակի ու տարածության կապն առավել ակնհայտ է դրսևորվում «վայրկյան» բառի մեջ: «Վայր» բառն ընդարձակ զարգացում կրած բառ է, որի առաջին և հիմնական նշանակությունն է բացաստան, դաշտ, տեղ: «Վայր մի» կամ «վայրիկ մի» գրաբարում նշանակել է նաև պահ, մի փոքր ժամանակ: Բառակազմական գործընթացի շնորհիվ «վայրիկ մի» բառը ստացել է վայրկյան ձևը¹¹: Սա հարցի բառակազմական կողմն է, իսկ տեղի գաղափարից ժամանակի գաղափարին անցումը կատարվում է «ատենան» բառի միջոցով: «Ատենան» նշանակում է ժողովասրահ, դատարան, ժողով, դատական նիստ, ինչպես նաև դատարանի առաջ, առաջին, բնականաբար և հետո, հետ: Դրանով իսկ ատենան ընկալվել է որպես դատական ժողովի և՛ տեղ, և՛ տևողություն, և՛ ժամանակ, որն արտահայտվում է «ատեն» կամ «ատենան» բառով¹²: Ժամ՝ «եկեղեցական արարողության ժամանակը», և «ատենան դատական նիստ եղած կամ լինելու ժամանակը» ժամանակի ընթացքում ընդհանրացվել են և նշանակել ժամանակ առհասարակ: Այսպիսով՝ «վայրկենան» բառի մեջ անխզելիորեն կապվում են տարածությունն ու ժամանակը: Այս բառերի ստուգաբանությունից պարզ դարձավ, որ եթե ժամանակն ընդամեն-

⁹ Աճառյան Հր., նշվ. աշխ., հ. 4, Ե., 1979, էջ 383:

¹⁰ Նույն տեղում, հ. 2, Ե., 1973, էջ 221:

¹¹ Նույն տեղում, հ. 4, էջ 300:

¹² Նույն տեղում, հ. 1, էջ 286:

նր գործողության հետևանք է, ապա տարածությունն անմիջական գործողություն ցույց տվող գոյական է: Հետևաբար, լեզվական տեսանկյունից, որքան էլ տարօրինակ թվա, տարածությունն ավելի սերտ կապի մեջ է շարժման հետ, քան ժամանակը, թեև, կարծես ակնհայտ ու անառարկելի է, որ հենց ժամանակն է հոսում: Բայց երևույթների խորքային կապերը բացահայտելու գործում առողջ բանականությունը միշտ չէ, որ բարի ուղեցույց է: Լեզվաբանությունը հուշում է, որ շարժման և տարածության միջև պետք է գոյություն ունենա ավելի խոր կապ, քան մինչ այժմ հայտնի է:

Ժամանակակից բնագիտությունն ապացուցել է, որ ժամանակն ու տարածությունը անբաժանելի են շարժվող մատերիայից: Սակայն այդ կապը միշտ չէ, որ գիտակցվել է նրա կողմից: Ընդհուպ XX դարի սկիզբը բնագիտությունը, խոսելով ժամանակի ու տարածության մասին, հետևելով Նյուտոնին, դրանք դիտում էր իրարից անջատ, իբրև ինքնուրույն գոյաձևեր, մատերիայից ու շարժումից անկախ գոյություն ունեցող: Այսինքն՝ բնագիտությունը տարածությունը նույնացնում էր դատարկության հետ, համարում էր, որ այն բացարձակ է, միշտ ու ամենուրեք միատեսակ և անշարժ, իսկ ժամանակն ընթանում է հավասարաչափ: Բացարձակ տարածության ու ժամանակի գաղափարները համապատասխանում էին աշխարհի որոշակի ֆիզիկական պատկերին: Աշխարհի ֆիզիկական պատկերի փոփոխությունը փոփոխության ենթարկեց նաև տարածության ու ժամանակի վերաբերյալ հայացքները: Ժամանակակից ֆիզիկան մի կողմ նետեց հին պատկերացումները տարածության մասին՝ որպես մարմինների դատարկ գետեղարանի, և ժամանակի մասին՝ որպես ողջ տիեզերքի համար միասնական մի երևույթի: Տարածության ու ժամանակի արդի տեսության ստեղծման գործում մեծ դեր ունեցան Լորենցսկու, Ռիմանի, Գաուսի, Բոյայի գաղափարները: Բուտլերովի, Ֆյոդորովի ու նրանց հետևորդների հետազոտությունները բացահայտեցին տարածական հատկությունների կախվածությունը մատերիական մարմինների ֆիզիկական բնույթից, մատերիայի ֆիզիկական հատկությունների պայմանավորվածությունը ատոմի տարածական դասավորությամբ: Եթե եվկլիդյան երկրաչափությունը հիմնվում էր տարածության բացարձակ հարթության, անշարժության, կայունության վրա, ապա Լորենցսկին, տարածությունը կապելով շարժման հետ, հանգեց այն եզրակացության, որ տարածության հատկությունները միշտ և ամենուր միատեսակ ու անփոփոխ չեն, դրանք փոխվում են՝ կախված մատերիայի առավել ընդհանուր հատկություններից: Հետևաբար, նա ստեղծեց ոչ եվկլիդյան երկրաչափություն, որն առավել ընդհանուր է և ներառում է եվկլիդյան երկրաչափությունը՝ որպես մասնավոր դեպք: Հետագայում Ռիմանը ստեղծեց ոչ եվկլիդյան ևս մեկ երկրաչափություն:

Շարժվող մատերիայի հետ տարածության ու ժամանակի միասնության մասին Լորենցսկու ու Ռիմանի գաղափարներն իրենց հետագա զարգացումն ու որոշակիացումը ստացան Այնշտայնի հարաբերականության տեսության մեջ: Բացահայտվեց, որ տարածությունն ու ժամանակը գոյություն ունեն ոչ թե ինքնին, մատերիայից

անջատ, այլ այնպիսի համընդհանուր փոխկապակցվածության մեջ են, որ կորցնում են իրենց ինքնությունությունը և հանդես են գալիս որպես միասնական ու անբաժանելի տարածա-ժամանակի հարաբերական կողմեր: Ինչպես գրում են Ա. Այնշտայնը և Լ. Իֆելդը՝ «...ժամանակի ու տարածության բաժանումն օբյեկտիվ իմաստ չունի, քանի որ ժամանակն այլևս բացարձակ չէ»¹³: Ըստ այդմ՝ մարմինների տարածությունն ու ժամանակի ընթացքը կախված են այդ մարմինների շարժման արագությունից, և որ քառաչափ կոնտինուումի (տարածա-ժամանակ) կառուցվածքը կամ երկրաչափական հատկությունները փոխվում են՝ կախված նյութի մասնիկների կուտակումից ու դրանցից առաջացող ձգողության դաշտից: Այսինքն՝ շարժումն ունի տարածական ու ժամանակային բնույթ: Հետագայում Ա. Ա. Ֆրիդմանը նյութի ու տարածության խտացման վերաբերյալ ստեղծեց մի մաթեմատիկական մոդել, ըստ որի՝ մեր մետազալակտիկան առաջացել է մի կետից: Վ. Համբարձումյանի համոզմամբ՝ այն չափազանց խիստ ու չարդարացված վերացարկում է: Նա գրում է. «Հավանաբար, մետազալակտիկայի ծավալը «սկզբնական պահին» թեև եղել է ոչ մեծ, բայց և զրոյից տարբեր, իսկ նյութի սկզբնական խտությունը շատ բարձր, բայց ոչ, իհարկե, անսահման»¹⁴: Վ. Համբարձումյանը առաջ քաշեց մի հիպոթեզ, ըստ որի՝ գալակտիկաներն առաջանում են նախաաստղային գերխիտ նյութերից կամ գալակտիկաների կորիզներից՝ պայթյունի հետևանքով: Այդ պահից էլ սկսվում է տվյալ համակարգի ժամանակի հաշվարկը, և տեղի է ունենում տարածության ընդարձակում, որը շարունակվում է առ այսօր: Աստղասփյուռների հայտնագործումը թույլ տվեց հանգել այն եզրակացության, որ տիեզերածնության գործընթացը միաժամանակյա ակտ չէ, այն շարունակվում է: Տիեզերքը տարաբաժանման փուլում է, առաջանում են նոր գալակտիկաներ, գալակտիկաների կույտեր, աստղեր, աստղային խմբեր ու կուտակումներ, այսինքն՝ աստվածային արարչագործությունը շարունակվում է, այն չի ավարտվել: Շարունակվում է նաև մարդկային արարչագործությունը, որի արդյունքը ժամանակակից գիտության ու տեխնիկայի մեծագույն նվաճումներն են: Փոքր-ինչ շեղվելով բուն նյութից՝ նրանք, որ եթե գոնե մեր մետազալակտիկայի առաջացման հարցում կրոնը և գիտությունը ընդհանուր գծերով համընկնում են, ապա համընկնում են նաև նրա վերջի առումով: Ե՛վ Տիեզերքը, և՛ մարդկությունն առ այսօր վերընթաց զարգացման փուլում են: Բայց ի վերջո, վաղ թե ուշ կգա մի ժամանակ (գործնականում մենք դրա-նից անսահման հեռու ենք), երբ կսկսվի հակառակ գործընթացը, վայրընթաց զարգացումը: Ամեն ինչ կոչնչանա, կկործանվի՝ նորից ստեղծվելու համար: Համենայնդեպս, այդ կարծիքին են և՛ գիտությունը, և՛ կրոնը:

¹³ Այնշտայն Ա., Իֆելդ Լ., *Ֆիզիկայի էվոլյուցիան*, Ե., 1968, էջ 203:

¹⁴ Амбарцумян В. А., *Философские вопросы науки о вселенной*, Е., 1978, с. 101.

Եվ այսպես, ինչպես հնագիտական պեղումները, գտածոները, դրանց համադրումն ու ամբողջացումը հնարավորություն են տալիս քայլ առ քայլ վերականգնելու անհիշելի ժամանակներում ապրած մարդկանց կյանքը, կենցաղն ու բարքերը, այդպես էլ լեզվաբանական պեղումները, բառերի ծագումնաբանությունը, ստուգաբանությունը, դրանք միմյանց հետ կապակցելը հնարավորություն են տալիս ի հայտ բերելու շրջապատող աշխարհի այն ընդհանուր պատկերը, որը թաքնված է լեզվի խորքային ենթաշերտերում, և որին համառոտեն ձգտել ու ձգտում են կրոնն ու գիտությունը: Բայց մինչ այդ լեզվական բառապաշարի նման վերլուծությունը, մեր կարծիքով, կարող է ոչ միայն ամրագրել գիտության արդեն իսկ բացահայտած իրական աշխարհի կապերը, ապացուցելով, որ այդ կապերն ու հարաբերությունները բնական լեզուն շատ ավելի վաղ է նկատել, քան բնագիտությունն ու փիլիսոփայությունը, այլև հուշել, թե դեռ ինչ կապեր գոյություն ունեն, որոնց վրա հարկ է ուշադրություն դարձնել ու բացահայտել կամ խորացնել արդեն բացահայտվածը: Այսինքն՝ այս մոտեցումը կրում է էվրիստիկական մեծ ներուժ: Բայց դրան պետք է վերաբերվել մեծ զգուշությամբ, որովհետև բառակազմության և բառիմաստի փոփոխության ու զարգացման գործընթացները բավական բարդ են ու երբեմն հակասական: Այս գործում թերևս ամենամեծ օգնությունը կարող է ցույց տալ համեմատական լեզվաբանությունը:

ЕСТЕСТВЕННЫЙ ЯЗЫК КАК СРЕДСТВО ВЫЯВЛЕНИЯ СВЯЗЕЙ И ОТНОШЕНИЙ РЕАЛЬНОГО МИРА

ТАНАНЯН Г. Г.

Резюме

Семантический и философский анализ ряда слов естественного языка, таких как пространство, время, движение, секунда, инстанция и т. д., явствует о том, что многие связи реального мира были зафиксированы языком намного раньше, чем естествознанием. Подобные исследования имеют определенное эвристическое значение в выявлении новых связей реального мира. Лингвистические изыскания, происхождение и этимология слов дают возможность выявить общую картину окружающего нас мира, сокрытую в глубинных слоях языка, что пытаются сделать наука и религия.